ԼԸ. ԲԱՐԿԱՑԱԾ ՄԱՐՕՆ

Դուրս վազեցի քեռի Պետրոսի վրանից: Ես երկար չէի կարողանում մոռանալ անապատական ճգնաւորին: Այս աբեղան ինձ երեւում էր որպէս մի կախարդական անձնաւորութիւն: Քանի ժամ առաջ ես տեսայ նրան «Կաթնաղբիւրի» ձորում. նա անցաւ այնտեղից որպէս մի անրջային ուրուական, մեղմ կերպով եղանակելով մի արաբական երգ: Նրա ձայնը թփերի միջից դուրս կանչեց կախարդ Սուսանին: Նա գրկեց Հիւբբիին եւ անհետացաւ բլուրների մէջ: Այժմ կրկին ես տեսայ նրան երկու մեծ դաւադիրների վրանում: Ի՞նչ գործ ունէր Սուսանի եւ Հիւբբիի բարեկամը Կարօյի եւ ծերունի որսորդի թշնամիների մօտ. — այդ ես հասկանալ չէի կարողանում:

Այդ մտածողութեան մէջ ես անցայ ուխտաւորների բանակը: Հասնելով մեր վրանը տեսայ այնտեղ բոլորը քնած էին. արթուն էր միայն Մարօն. նա դեւի պէս նստած վրանի մուտքի մօտ, սպասում էր ինձ:

— Որտե՞ղ կորար դու, — հարցրուց նա, երբ տեսաւ ինձ:

Ես ոչինչ չպատասխանեցի, եւ տեսնելով, որ վրանի մէջ կանայք քնած են, ներս չմտայ, այլ նստեցի դրսում կանաչ խոտերի վրայ: Բայց իմ լռութիւնը աւելի շարժեց Մարօի բարկութիւնը:

— Շատ հարկաւոր է, — ասաց նա ինքն իրան խօսելով, — չի էլ ուզում պատասխան տալ, կարծես ինձ համար կարմիր հարս է դարձել, սպասում է, որ ես դրան «բերանբացուկ» պէտք է տամ:

Այս խօսքերը մի այնպիսի հեգնական եղանակով արտասանեց Մարօն, որ անկարելի էր չծիծաղել: Բայց ես մտածեցի ծանր երեւացնել ինձ, այս պատճառով երեսս շուռ տոի, որ նա չտեսնէ իմ ծիծաղը:

Մարօն նստած էր վրանի դռանը ներսի կողմից. ես նրանից փոքր-ինչ հեռու էի:

— Եթէ դու կը գաս ինձ մօտ, այն ժամանակ քեզ հետ կը խօսեմ, — ասացի ես:

— Շատ հարկաւոր չէ, — պատասխանեց նա արհամարհանոք: — Ի՜նչ մեծ տղայ է դարձել, պէտք է նրա սպասին գնալ, ո՞նց չէ:

Ես նկատեցի, որ Մարօն բարկացած էր իմ վրայ, պէտք էր գիտենալ պատճառը. դրա համար ես մօտեցայ եւ նստեցի նրա մօտ:

— Դու այսօր շատ ես խօսացել, — ասաց նա այժմ աւելի ծանր կերպով. — լաւ է, որ գնաս քնես, գիտեմ, յոգնած կը լինես:

— Ի՞նչ գիտես, — հարցրի զարմանալով: